Պարույր Սևակ

Խեղկատակը

-Որտե՞ղ են ապրում քամիները:
-Պալատների մեջ:
Եվ, անշո՛ւշտ, մեր իսկ ռունգներում:
-Որտե՞ղ է մեռնում լռությունը:
-Քարոզների մեջ:
Եվ բռնադատված մեր իսկ ունկերում:
-Որտե՞ղ է պահված արյունը մեր տաք:
-Մեր հին թշնամու եղունգների տակ,
Մկրատի՛ կարոտ կեռ եղունգներում:
-Որտե՞ղ են մեռնում բոլոր կուռքերը:
-Ծափ ու ծնծղայի ծանրության ներքո,
Նաև խունկերում:
-Իսկ զորանում է մեր խելքը որտե՞ղ:
-Ո՛չ գանգում,
Այլ մեր վերքերո՛ւմ:
-Իսկ որտե՞ղ է մեր փրկությունը:
-Մե՛ր,
Եվ, ավա՛ղ, ո՛չ մեր ձեռքերում...

25.X.1962թ.
Երևան